

(Raspuns) փաստացի հարուած մըն է ուղղը-
լած հայ եկեղեցիին հերձուած կոչող օրթո-
տոքս մոլեռանդներուն :

* * *

Կրթական շարժումը պահ մը այնքան ծա-
լալ կը դանէ ու կ'ողբերէ բոլորը, որ Եաշի
հայերը կը ձեռնարկեն տպարան եւս հիմնել ու
դասադիրք տպել հոն : Չեռքս անցաւ տպարա-
նի հաստատման յայտարարութիւնը, 1847
Յունուարին գրուած, որ ահաւասիկ .

«Գիտելի է որ Հայոց ազգը բնակալու-
թիւններէ խալըսելու համար հին ժամանակ-
ները օտարանալով հայրենեացը երկրէն, դտաւ
Մոլտավիոյ մէջը նոր հայրենիք մը, ժողո-
վրդեան կողմանէ եղբայրական սիրով ընդու-
նելութիւն եւ իշխաններուն ալ հոգատար
պաշտպանութիւնը . վասնզի իր հեղ բնաւորու-
թիւնը եւ վաճառականութեան ու արհեստնե-
րու ունեցած ջանքը հասցուց զինքը աւ երկրին
ժողովրդեանը մէկ օգտակար մասը ըլլալու :

«Հայոց ազգը Մոլտավիային կառավար-
ուած փրկած օրինացը հովանաւորութեանը
տակ՝ շատ դարեր անցուց հոս այսպիսի գոր-
ծառնութեանց մէջ, այնպէս ժամանակներ,
երբ որ խոհեմ ու գիտուն անձինք ուրիշ եր-
կիրներ ցրուած, կը հոգային գիտութեանց
ծաղկելոյն եւ ազգիս երիտասարդացը զար-
դացմանը համար : Այս գիտաւորութեամբ
Հարք Միտիթարեանը հաստատեր էին Վենետիկ
ուսումնարան եւ տպարան, ուսկից պէսպէս
օգտակար գրքեր եւ զանազան գիտութեանց
ճիւղերով զարգարուած անձինք ելան : Ուսման
այսպիսի հաստատութիւններուն օրէ օր փա-
ռուոր հիմնադրութիւններով աւելնալը կը
տեսնուի, ինչպէս՝ Վենետիկի ճեմարանէն՝
գատ՝ Վիեննային ալ՝ Փատուայինը՝ Փարիզի-
նը՝ Մոսկուայինը՝ Իզմիրինը՝ Սթամպուլինը,
եւայլն :

«Գիտաւորութիւնները՝ որոնց կ'ընդգիծմանն
այն հաստատութիւնները եւ խոհեմութեամբ
կը յաղթեն, մանաւանդ Հայերուն քիչ գտնը-
լած տեղերը . եւ յայտնի օգուտները՝ որ ա-
սոնցմէ առաջ կուգան, յօժարեցուցին նահան-
գիս Հայազնէից գլխաւորները, ուր ազգէս բա-
ւական ժողովուրդ կը գտնուի, մանկանց հա-
մար պատրաստողական տպարաններ հաստա-

տելու : Այս գովեստից արժանի փափաքը գը-
տաւ բարերարական պաշտպանութիւն մը հայ-
րական իշխանութենէն Նորին Բարձրութեան
Միքայէլ Սթուրգա իշխանին, եւ ահա զի ուս-
մանց յարգի գործակալութեան միջնորդու-
թեամբը արդէն մէկ քանի տարիէն Եաշ քաղա-
քը եղած կեդրոնական ուսումնարանէն գատ՝
Ռօման, Պօթօջան, Ֆօքջան եւ Հօնքա քաղաք-
ներն ալ կը գտնուին պատրաստողական վար-
ժարաններ, Հայոց տղայոցը համար, ուր
վարժապետները կը սորվեցնեն ազգին եւ ու-
րիշ լեզուներուն մէջ օգտակար գիտութիւննե-
րը, որոնցմով տղայքը՝ որ այն ընթացքը ըստ
արժանուոյն կատարեն, դիւրաւ կրնան ճար-
տար արհեստաւորի, խոհեմ վաճառականի՝
լիմաստուն տնտեսի եւ ուրիշ պաշտօններու բե-
ռը տանիլ, որոնք շահաւէտ եւ պատուատու
ճամբայ մը կը բանան : Ուստի՝ հայերէն ու-
սումնական գրքերը ուրիշ երկիրներէն բերե-
լու եղած գիտաւորութիւններուն նայելով, ո-
րոնք չեն կրնար ալ ամենայն մասամբ յարմար
ըլլալու այս կողմերուն համար, հարկաւոր ե-
ղած գրքերուն, ազգիս գլխաւորներուն եւ լու-
սաւորութեան փափաքողներուն նոյն բարեհա-
ճութիւնը ուղեց հայերէն գրերով տպարանի
մը հաստատութեան ալ, որ եւ բարձր հրամա-
նաւ՝ ծանուցեալ յարգի տէրութեան Քարտու-
զարութեանը 171 համարով յայտարարութեա-
նը մէջ, հաստատեցաւ Եաշ քաղաքը «Ինսթի-
թութու Ալպինէյ» անուանեալ տպարանին
մէջը :

«Այս նոր հաստատութեան այսպէս կարգի
գրուելը կը յայտնուի ամմէն հայկական դրա-
կանութեան ետեւէ ըլլողներուն, որպէսզի կա-
րողական անոր շահը վայելելու . որն որ Տէ-
րութեան մօտ ակնածութեանը տակ ըլլալով,
ազգիս թէ՛ նիւթական եւ բարոյական օգուտ-
ներ եւ թէ՛ կրթեալ ժողովրդոց առջեւը պար-
ճանք կը բերէ» :

* * *

Եաշի դպրոցը տեւեց մինչեւ 1887 թուա-
կանը : Ուրեմն հազիւ կէս դար տեւած է այս
կրթական շարժումը, որ այնքան յոյսեր ներ-
շնչեր էր պահ մը : Ան ոչ միայն երեւան բերեր
էր ծաղկեալ դպրոցներ Մոլտավայի մէջ, այլ
այնպիսի ջերմ մթնոլորտ մը ստեղծեր, որմէ